


ԲՅՈՒՋԵ

ՀԱՆՐԱՅԻՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ



Վանիկ Մարգարյան,
AM իրավաբանական ընկերություն,
Փաստաբան, ֆինանսական իրավունքի մասնագետ
© 2018

Ի՞նչ է ԲՅՈՒՋԵՆ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

- ✘ Պետական և համայնքի բյուջեները՝ պետությանը և տեղական ինքնակառավարման մարմիններին՝ Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների ձևավորման և ծախսման որոշակի ժամանակահատվածի ֆինանսական ծրագրեր են: (Բյուջետային համակարգի մասին ՀՀ օրենք, հ. 2)
- ✘ Ազգային ժողովը պետական բյուջեն ընդունում է Կառավարության ներկայացմամբ: Պետական բյուջեն օրենքով սահմանված կարգով ներառում է պետության բոլոր եկամուտները և ծախսերը: (ՀՀ սահմանադրություն, հ 110)
- ✘ Համայնքն ունի իր բյուջեն, որը համայնքի ղեկավարի ներկայացմամբ ընդունում է համայնքի ավագանին: (ՀՀ սահմանադրություն, հ 185)
- ✘ Համայնքներին պետության կողմից պատվիրակված լիազորությունները ենթակա են պետական բյուջեից պարտադիր ֆինանսավորման: (ՀՀ սահմանադրություն, հ 186)

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

- ա) բյուջետային համակարգի միասնականություն.
- բ) բյուջետային համակարգի մեջ մտնող տարբեր մակարդակների բյուջեների միջև բյուջետային մուտքերի և ելքերի տարանջատում.
- գ) բյուջեների ինքնուրույնություն.
- դ) բյուջեների մուտքերի և ելքերի արտացոլման լրիվություն.
- ե) բյուջեների հաշվեկշռվածություն.
- զ) բյուջետային ելքերի ամբողջական (համախառն) ծածկվածություն.
- է) բյուջետային միջոցների օգտագործման արդյունավետություն.
- ը) բյուջեների հրապարակայնություն.
- թ) բյուջետային միջոցների հասցեագրվածություն և նպատակայնություն.
- ժ) բյուջեների իրատեսություն


ՀՄԿՈՂԱԿԱՆ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐ

- ✘ Բյուջետային միջոցների օգտագործման արդյունավետության սկզբունքը նշանակում է, որ բյուջեների կազմման և կատարման ժամանակ պետք է ելնել նախատեսված արդյունքի բյուջետային միջոցների նվազագույն ծավալի օգտագործմամբ կամ բյուջեով նախատեսված միջոցների ծավալով լավագույն արդյունքի հասնելու անհրաժեշտությունից:
- ✘ Բյուջետային միջոցների հասցեագրվածության և նպատակայնության սկզբունքը նշանակում է, որ բյուջետային միջոցներն օրենսդրությանը համապատասխան հատկացվում են կոնկրետ ստացողներին՝ ֆինանսավորման հստակ նպատակների նշվածությամբ:
- ✘ Բյուջեների հրապարակայնության սկզբունքը նշանակում է՝ հաստատված բյուջեների և դրանց կատարման մասին հաշվետվությունների պարտադիր հրապարակումը մամուլում, բյուջեների կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվության մատչելիություն., բյուջեների նախագծերի քննարկման և որոշումների ընդունման գործընթացի պարտադիր թափանցիկություն հասարակության և զանգվածային լրատվության միջոցների համար:
- ✘ Համայնքների ղեկավարները պայմաններ են ստեղծում, որպեսզի համայնքի բյուջեի նախագծին, տարեկան հաշվետվությանը ծանոթանալու և ուսումնասիրելու ցանկություն ունեցող համայնքի անդամները դյուրությամբ ձեռք բերեն համապատասխան փաստաթղթերը:

ԻՆՉՊԵՍ ՍՏԱՆԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

- ✘ Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը և (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին և ստանալու այդ տեղեկությունը:
 - ✘ Տեղեկատվության ազատությունը կարող է սահմանափակվել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքով նախատեսված դեպքերում, այդ թվում՝ տեղեկության տրամադրումը մերժվում է, եթե դա պարունակում է պետական կամ ծառայողական գաղտնիք:
 - ✘ Ի տարբերություն համայնքների բյուջեների, պետական բյուջեի կազմում կարող են հաստատվել գաղտնի հոդվածներ:
 - ✘ Պետական և ծառայողական գաղտնիքի շարքին կարող են դասվել հետևյալ բնագավառների տեղեկությունները.
 - Ռազմական,
 - Արտաքին հարաբերություններ,
 - Տնտեսության, գիտության և տեխնիկայի,
 - Հետախուզական, հակահետախուզական, օպերատիվ-հետախուզական
- Ցանկը սահմանված է ՀՀ կառավարության 13 մարտի 1998 թվականի N 173 որոշմամբ

ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԲՅՈՒՋԵ



ԾԱԽՍԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՈՒՄՆԵՐՈՎ

- ✘ Պետության, համայնքների և օրենքով սահմանված այլ սուբյեկտների կողմից ապրանքներ, աշխատանքներ և ծառայություններ ձեռք բերում իրականացվում է պետական գնումների միջոցով
- ✘ Պետական գնումների կազմակերպման ամենատարածված եղանակները՝ մրցույթ և գնում մեկ անձից
- ✘ Մրցույթի դեպքում հիմնականում հաղթող է ճանաչվում նվազագույն գին առաջարկած մասնակիցը, ով բարարում է հայտով սահմանված պահանջներին
- ✘ Մեկ անձից գնում թույլատրվում է եթե առկա է.
 - Հեղինակային, հարակից, բացառիկ իրավունք
 - Արտակարգ և չնախատեսված հանգամանք
 - Լրացուցիչ գնում
 - 1մլն դրամը չգերազանցող գնման գին
 - ՀՀ տարածքից դուրս գնում

ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

- ✘ **Հոդված 179. Յուրացնելը կամ վատնելը.** Յուրացնելը կամ վատնելը՝ հանցավորին վստահված ուրիշի գույքի հափշտակությունը զգալի չափերով
- ✘ **Հոդված 308. Պաշտոնեական լիազորությունները չարաշահելը.** Պաշտոնատար անձի կողմից իր պաշտոնեական ղիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելը կամ ծառայողական պարտականությունները չկատարելը՝ շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով, որն էական վնաս է պատճառել անձանց, կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին, հասարակության կամ պետության օրինական շահերին (գույքային վնասի դեպքում՝ հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափը գերազանցող գումարը կամ դրա արժեքը)
- ✘ **Հոդված 309. Պաշտոնեական լիազորություններն անցնելը.** Պաշտոնատար անձի կողմից դիտավորությամբ այնպիսի գործողություններ կատարելը, որոնք ակնհայտորեն դուրս են եկել նրա լիազորությունների շրջանակից և էական վնաս են պատճառել անձանց, կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին, հասարակության կամ պետության օրինական շահերին (գույքային վնասի դեպքում՝ հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափը գերազանցող գումարը կամ դրա արժեքը)
- ✘ **Հոդված 310. Ձեռնարկատիրական գործունեությանն ապօրինի մասնակցելը.** Պաշտոնատար անձի կողմից, օրենքով սահմանված արգելքին հակառակ, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող կազմակերպություն հիմնադրելը կամ անձամբ կամ վստահված անձի միջոցով այդպիսի կազմակերպության կառավարմանը մասնակցելը, եթե այդ արարքները կապված են այդպիսի կազմակերպությանն արտոնություններ և առավելություններ տրամադրելու կամ այլ ձևով հովանավորելու հետ
- ✘ **Հոդված 311. Կաշառք ստանալը.** Պաշտոնատար անձի կողմից կաշառք ստանալը, այսինքն՝ պաշտոնատար անձի կողմից անձամբ կամ միջնորդի միջոցով իր կամ այլ անձի համար դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն ստանալը կամ պահանջելը կամ ստանալու խոստումը կամ առաջարկն ընդունելը՝ կաշառք տվողի կամ նրա ներկայացրած անձի օգտին պաշտոնատար անձի կողմից իր լիազորությունների շրջանակում որևէ գործողություն կատարելու կամ չկատարելու կամ իր պաշտոնեական դիրքն օգտագործելով այդպիսի գործողություն կատարելուն կամ չկատարելուն նպաստելու կամ ծառայության գծով հովանավորչության կամ թողտվության համար
- ✘ **Հոդված 314. Պաշտոնեական կեղծիքը.** Պաշտոնատար անձի կողմից շահադիտական նպատակով կամ անձնական այլ դրդումներով կամ խմբային շահերից ելնելով՝ պաշտոնական փաստաթղթերում ակնհայտ կեղծ տեղեկություններ կամ գրառումներ մտցնելը, կեղծում, քերվածք կամ այլ թվական գրառումներ կամ փոփոխություններ կատարելը, ինչպես նաև կեղծ փաստաթղթեր կազմելը կամ հանձնելը

ՎԵՐԱՀՍԿՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐ – ՈՒՄ ԴԻՄԵԼ

- ✘ Ազգային ժողովը վերահսկողություն է իրականացնում պետական բյուջեի կատարման նկատմամբ և որոշում է կայացնում բյուջեի կատարման մասին Կառավարության կողմից ներկայացվող տարեկան հաշվետվության վերաբերյալ
- ✘ Հաշվեքննիչ պալատն անկախ պետական մարմին է, որը հանրային ֆինանսների և սեփականության ոլորտում հաշվեքննություն է իրականացնում պետական բյուջեի և համայնքային բյուջեների միջոցների օրինականության և արդյունավետության նկատմամբ: Հաշվեքննիչ պալատն իրավաբանական անձանց մոտ ստուգումներ կատարելու իրավունք ունի միայն օրենքով սահմանված դեպքերում:
- ✘ Պետական վերահսկողության ծառայությունը պետական վերահսկողության ոլորտում գործող վարչապետին ենթակա մարմին է գործադիր մարմնին վերապահված վերապահված վերահսկողական լիազորությունների իրականացումը, այդ թվում՝ պետական միջոցների կառավարման և ձևավորման օրինականության մասով
- ✘ Իրավապահ մարմիններ, այդ թվում՝ դատախազություն, քննչական մարմիններ, ազգային անվտանգության ծառայություն, ոստիկանություն
- ✘ Չանգվածային լրատվության միջոցներ՝ որպես առևերույթ հանցագործության հատկանիշներ պարունակող տեղեկատվության տարածողներ, որը կարող է հանդիսանալ քրեական գործի հարուցման առիթ

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ